

որ ըստ իրեն տեւած է գրեթէ 2 տարի. (տես Թէոդ. «Պատմութիւն Մոնղոլիայի վարժարանի», Հատոր Բ. էջ 10 և 122), ինչ որ յիշատակուած չէ Ժողով. Արձանագրութեանց մէջ: — Բ. Գ. և Դ. շրջանները կարելի է Անուշահի անուանել, վասն զի 1837 Փետրուար 10-ին ինքը կը կարգուի միաժամանակ՝ նաև Փատուայի Մուրատեան վարժարանի Տեսուչ՝ Հ. Իզնատիոս Փափագեանի տեղ. (Անդ՝ էջ 122): Արդէն Սոմալեան Աբբասօր Մատրաս զրկած մէկ նամակէն կը հասկցուի՝ երկու վարժարաններուն վրայ մէկ տեսուչ դրուած ըլլալը, երբ հաղորդած ատեն՝ որ Մուրատեան վարժարանի տեսուչն է Հ. Սարգիս, Ռափայէլեան վարժարանի մասին կ'ըսէ պարզապէս. «կայ և նա ընդ մերով տեջութեամբս ի քաղաքի աստ ի վնեւորի». (գր. առ Յովնան-նես Շահրիման, 1837 Սեպտեմբեր 24): Այս վերջին խօսքով կ'ակնարկէ այն պարագան՝ որով «անուանական» Տեսուչ կը կարգուի Միաբանութեան Աթոռակալ Հ. Մկրտիչ Վ. Ագեբեանը «փոխանակ. Վ. Հ. Սարգսի վարդ. թէոդորեան. առանց ձեռնամուխ լինելոյ ի գործ ինչ վերակացութեան նորին». («Մատեան պաշտօնէից Ռափ. Վարժ. ի».): Միեւնոյն ժողովով «Փոխանորդ եկաց» իրեն Հ. Յակոբոս ճելալեան «գործադիր ի նմին դպրոցի». (Նմկ. Սումարեան Աբբասօր առ Հ. Իզնատիոս Փափագեան, 1837 Փետրուար 11): Ռափայէլեան դպրոցի վրայ այս կարգադրութիւնը եղած է «ըստ բաղձանաց Պարոնին», այսինքն Աղեքսանդրի. (Նմկ. Սոմ. Աբբասօր առ Հ. Մովսէս Անպերպոյ, 1837 Ապրիլ 16. էջ 16): Ըստ իս՝ այս շրջանը տեւած պէտք է ըլլայ մինչև 1840, երբ Հ. Անտոնիոս Սոֆեալեան «Մեծաւոր» տիտղոսով կը գտնենք Ռափայէլեան վարժարանին վրայ մինչև 1841-ի կէսերը. այս ատեններն է որ Սոմալեան Աբբ. կը գրէ առ Հ. Աղեքսանդր Պէշիկթաշլեան. «Այժմ Հ. Սարգիս անմեկին է ի դպրոցէն». (գր. 1841 Մայիս 14): Ուստի, քանի որ սկսեալ 1837 թուականէն մինչև 1843 ո՛չ մէկ տեղ չենք հանդիպիր Ռափայէլեան վարժարանին համար յատուկ նոր տեսչի մը անուան, կը հետեցնեմ՝ որ նաև անուշահի մտքով պէտք է առնել նոյն իսկ Սոմալեանի հետեւեալ խօսքերը՝ գորս կ'ուղղէ յոգնակի ձեւով առ Հ. Անանիա ճելալեան ի Պոլիս, թէ «վասն կրկին դպրոցացս յառաջիկայս գարնան, զոն խորհուրդք ոչ անգործունեայք առ տեսուչս նոցին». (գր. 1837 Հոկտ. 13). ինչպէս նաև ի Պոլիս նոր գործակալ մը դնելու գաղափարով ըստածը, «կրկին ուղղաց դպրոցացս ընտրել այդը (ի Պոլիս) ի տեղի քո զո և կամիցին». (գր. 1837 Սեպտ. 8): Անուշահի ձեռին տակ կը յիշատակուի դարձեալ 1841 Յուլիս — 1842 թուականներուն՝ Հ. Սարգսի անունը իբր Տեսուչ. Ժամանակներ՝ գորս Մուրատեան եկամուտները ազատելու համար տիրող կառավարութեան կամքէն մայրաքաղաքէ մայրաքաղաք դիմումներու գործածեց, ինչպէս ծանօթ է մեր վարժարանական պատմութեան:

4. Այժմէն ըսած ըլլանք, որ Սորկուճեանի վիեննա, Լոնտրա և Փարիզ մեկնելէ վերջ՝ «փոխանակաւ եղեն խոստովանահարք Վ. Վ. Հ. Ներսէս Սարգիսեան, Հ. Եղուարդ Հիւրմիւզեան, Հ. Պետրոս Մինասեան, Հ. Եսայի Մարաքեան և Հ. Գրիգոր Ալեփոն». «Մատեան Պաշտ. Ռափ. Վարժ. ի»): Ուրեմն այս կէտը նկատի ունենալու է հետագայ շրջաններուն մէջ Հոգեւոր Հայրի տիտղոսին տակ՝ գէթ մինչև ատեն մը: Այնու հանդերձ որոշ հանդիպումներու ժամանակ՝ ըստ տեղւոյն յիշատակել զանց չենք ընել:

5. Ինքն իսկ Հ. Սարգիս վարեց մատակարարական մասը 1836-ի սկզբնական շրջանին. (Թէոդորեան «Պատմ. Մոնղ. Վարժ. ի», Հտ. Բ. էջ 8) և ապա նոյն տարւոյ երկրորդ կիսուն յանձնեց զայն Հ. Ռափ. Թրեանցի:

6. Միանգամայն Մեծաւոր էր նոյն դպրոցին: